ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
2024 թվականի նոյեմբերի 8

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության Նախագահ **Արմեն Մելիքբեկյանի**, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **ՀՖՖ**), մի կողմից, և

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքը, ի դեմս Համայնքի ղեկավար **Դավիթ Համբարձումյանի** (այսուհետ՝ **Համայնք**), մյուս կողմից, համատեղ հիշատակման ժամանակ այսուհետ՝ **«Կողմեր»**, **նպատակ ունենալով**

- Համայնքում խթանել ֆուտբոլ խաղի զարգացումը, խրախուսել երիտասարդներին ֆուտբոլի միջոցառումների մասնակցելուն,
- Համայնքի սոցիալ-տնտեսական միջավայրի վրա դրական ազդեցություն ունենալ սպորտային ենթակառուցվածքների բարելավման միջոցով,
- Ֆուտբոլը դարձնել ավելի հասանելի բոլոր խմբերի համար,
- Բարձրացնել Մասիս համայնքի սպորտային ենթակառուցվածքների որակը՝ ազգային և միջազգային չափանիշներին համապատասխան

Արձանագրելով, որ.

Կողմերն ունեն համապատասխան իրավասություններ սույն Համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքելու և իրագործելու համար, համաձայնվեցին և ընդունեցին հետևյալը՝

1. Համայնքը պարտավորվում է մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Երիտասարդական 1/11 հասցեում գտնվող կիսակառույց մարզադաշտը (այսուհետ՝ Մարզադաշտ) 25 տարով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՖՖ-ին:
2. ՀՖՖ-ն պարտավորվում է Մարզադաշտում կառուցել մեկ արհեստական խոտածածկով խաղադաշտ, տրիբունաներ, իրականացնել վերակառուցման և բարեկարգման աշխատանքներ: Ընդհանուր ներդրման չափը կազմելու է նվազագույնը 130 միլիոն ՀՀ դրամ:
3. Կողմերից յուրաքանչյուրը ստորագրում է Հուշագիրն իր իրավասությունների շրջանակներում՝ ի հաստատումն իր կողմից արտահայտված մտադրությունների:
4. Հուշագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Հուշագրի մեկական օրինակ:
5. Կողմերի վավերապայմաններն ու ստորագրությունները.

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ
ՀՎՀՀ՝ 02566915
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27

էլ. փոստ՝ ffa@ffa.am, legal@ffe.am
Նախագահ՝ Արմեն Մելիքբեկյան

Ստորագրություն/Կ.Տ.

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք

հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Կենտր. հրապարակ թիվ 4
էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am
Համայնքի ղեկավար՝ Դավիթ Համբարձումյան

Ստորագրություն/Կ.Տ.